



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

*ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ*

Հետազոտության թեման՝ Ընտանիքի հոգեբանություն,
կոնֆլիկտներ

Առարկան՝ Կենսաբանություն

Հետազոտող ուսուցիչ՝ Ալինա Յայլոյան

Ուսումնական հաստատություն՝ ՀՀ Արարատի մարզի Արևաբույրի
Հրաչյա Թադևոսյանի անվան միջնակարգ դպրոց

Երևան 2023

Թեմա՝ Ընտանիքի հոգեբանություն, դեռահասություն, կոնֆլիկտներ

Հարց 1. Ի՞նչ ազդեցություն են ունենում ընտանեկան

կոնֆլիկտները դեռահասների առողջության վրա:

Հարց 2. Կոնֆլիկտային իրավիճակներում ժամանակակից

դեռահասներին ինչպիսի՞ վարքագիծ է բնորոշ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գլուխ 1. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ, ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 2. ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. 1 Դեռահասության ընդհանուր

նկարագիր.

2. 2 Դեռահասաների փոխհարաբերությունները չափահասաների և հասակակիցների հետ. . .

2. 3 Ինքնագիտակցության զարգացումը դեռահասության տարիքում.

ԳԼՈՒԽ 3 ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

3. 1 Ինչ է կոնֆլիկտը. Կոնֆլիկտի

տեսակները.

3. 2 Ընտանեկան կոնֆլիկտները, դրանց ազդեցությունը երեխայի /դեռահասի/ վրա. . .

ԳԼՈՒԽ 4 ԿՈՆՖԼԻԿՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՎԱՐՔԻԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. 1 Հետազոտական մեթոդի

նկարագիրը.

4. 2 Հետազոտության արդյունքների վերլուծություն, ամփոփում.

Եզրակացություններ և

առաջարկություններ.

Օգտագործված գրականության

ցանկ.

.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընտանիքը մշտապես կլինի հասարակության հիմքը: /Բալզակ/

Ընտանիքը ամուսնության վրա հիմնված մարդկանց փոքր խումբ է, որի անդամները միմյանց հետ կապված են կենցաղի ընդհանրությամբ, փեխադարձ օգնությամբ և բարոյական պատասխանատվությամբ: Որպես սոցիալական երևույթ, ընտանիքը ունի բազմաթիվ տարիների պատմություն, փոխվում է հասարակության տնտեսական հիմքի զարգացմանը համապատասխան՝ պահպանելով հարաբերական ինքնուրույնություն: Ընտանիքի կառուցվածքը, ընտանեկան դերերը, ներընտանեկան հարաբերությունների մակարդակները կարևոր դեր և նշանակություն ունեն երեխայի և դեռահասի հոգեբանության վրա: Ընտանիքը նաև այն սոցիալական միջավայրն է, որտեղ երեխան փորձում է վերլուծել օրվա իրադարձությունները, տպավորությունները և տեղեկությունները, որոնք պայմանավորված են ներընտանեկան հարաբերությունների բնույթով և ծնողների վերաբերմունքով:

Երեխայի, դեռահասի անձի ձևավորումն առաջին հերթին տեղի է ունենում ընտանիքում, և ընտանեկան մթնոլորտը, հարաբերությունները, դաստիարակությունը վճռորոշ ազդեցություն են ունենում դեռահասի ներդաշնակ զարգացման և հոգեկան առողջության վրա, որում էլ կայանում է թեմայի արդիականությունը:

Ընտանիքում ձևավորվում են երեխայի բնավորությունը, արժեքային համակարգը, բարոյական պատկերացումները, ինքնագնահատականը, սոցիալական դիրքորոշումը, վարքը, տեղի է ունենում անձի սոցիալականացում:

Ընտանիքի դերը դեռահասի հոգեկան առողջության պահպանման գործում հատկապես շատ կարևոր է այն պայմաններում, երբ ընտանիքում հաճախակի են կոնֆլիկտները, որոնց կանդրադառնանք ավելի ուշ:

Դեռահասության տարիքային շրջանը հոգեբանական գրականության մեջ տարբեր անվանումներ է գտել՝ դեռահասության շրջան, անցումային շրջան, պուբերտատային շրջան, պորտալարի երկրորդ կտրման շրջան: Այս տարիքը համարվում է սեռական վարքի վաղ դրսևորման շրջան, քանի որ տեղի է ունենում սեռական էներգիայի և սեռական ցանկությունների աճ: Դեռահասությունը մանկության և հասունության միջև

օնտոգենետիկական զարգացման շրջան է, որը բնութագրվում, է որակական փոփոխություններով՝ կապված սեռական հասունացման և «մեծահասակների աշխարհ» մուտք գործելու հետ: Այս շրջանում անձն ունենում է բարձրացված դյուրագրգիռություն, իմպուլսիվություն, որի հիման վրա էլ հաճախ ձևավորվում են անգիտակցական սեռական հակումները: Դեռահասության տարիքում հոգեկան զարգացման հիմնական լոկոմոտիվները հանդիսանում են <<Ես>> կոնցեպցիայի, իր հնարավորությունները ճանաչելու փորձերը: Այս տարիքում տեղի է ունենում վերլուծահամադրական գործողությունների բարդ ձևերի կայացումը, վերացական մտածողության ձևավորումը, վարքի բարոյաէթիկական նորմերին տիրապետումը: Այս տարիքում տեղի է ունենում ոչ միայն ֆիզիկական հասունացում, այլ նաև անձնավորության ակնառու հոգեբանական հասունացում, որն իրականացվում է շրջապատող իրականության ազդեցությունների ուղեկցությամբ, դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքի պրոցեսում: Այս շրջանը աշխարհայացքի, բարոյական համոզմունքների, սկզբունքների ու իդեալների, գնահատման դատողությունների ձևավորման տարիք է, որոնցով դեռահասը սկսվում է առաջնորդվել իր կյանքում: Դեռահասության տարիքում սկսվում են կատարվել լուրջ փոփոխություններ: Սեռահասունացումը սկսվում է մոտավորապես 11 տարեկանում ակտիվորեն սկսվում են արյան մեջ արտադրվել հորմոններ, տղաների մոտ անդրոգեն, իսկ աղջիկների մոտ՝ էստրոգեն: Փոխվում է ոսկրային համակարգը, ինչն էլ իր հերթին է դեռահասին դժվարությունների առաջ կանգնեցնում: Դեռահասն անընդհատ ստիպված է լինում հարմարվել իր օրգանիզմում կատարվող լուրջ փոփոխություններին, որոնք անդրադառնում են նաև արտաքին տեսքի վրա, որոնք կարելի է բնութագրել որպես երկրորդային սեռական հատկանիշներ:

Դեռահասության տարիքում դրսևորվող կամակորությունը հաճախ կապված է սկզբունքայնության, անկախության և ինքնուրույնության մասին ունեցած սխալ պատկերացման հետ: Այդ իսկ պատճառով նրանք բախվում, և հաճախակի են ունենում կոնֆլիկտներ, այսպես ասած նրանց տարիքում կոնֆլիկտները դառնում են անխուսափելի:

Առաջին գլխում կլիտեսնք ընտանեկան կոնֆլիկտների, դրանց առաջացման պատճառների մասին:

Երկրորդ գլխում կանդրադառնանք դեռահասության հոգեբանական առանձնահատկություններին:

Շրրորդ գլխում կանդրադառնանք կոնֆլիկտների ընհանուր նկարագրությանը, կգտնենք, թե ինչում է կայանում նրանց բուռն կոնֆլիկտային պահվածքը, կփնտրենք լուծումներ և կանխարգելիչ մոտեցումներ:

Չորրորդ գլխում արդեն կանդրադառնանք մեր անցկացվելիք բուն հետազոտությանը, արդյունքներին և, թե ինչու է ընտրվել այս մեթոդը հետազոտության համար: Կփորձենք պարզել, թե մերօրյա դեռահասների մոտ ինչպես է գնահատվում կոնֆլիկտային վարքի դրսևորումը:

Վարկած: Կոնֆլիկտային իրավիճակներում ժամանակակից դեռահասին բնորոշ մրցակցային ոճը:

Սույն աշխատանքի նպատակները՝

1. Բացահայտել ընտանեկան կոնֆլիկտների ազդեցությունը դեռահասների հոգեկան առողջության վրա
2. Բացահայտել դեռահասների վարքի առանձնահատկությունները տարբեր կոնֆլիկտային իրավիճակում:

Խնդիրներն են՝

1. Ծնողների, դեռահասների, հոգեբանական առանձնահատկությունների վերլուծություն, գրականության ուսումնասիրության հիման վրա.
2. Առանձնացնել մարդկանց վարքի տեսակները կոնֆլիկտային իրավիճակում.
3. Ուսումնասիրել և բացահայտել դեռահասների նախընտրած վարքի ձևերը կոնֆլիկտային իրավիճակում.

Հետազոտության մեթոդ առաջադրվում է Բ. Թումասի « Անձի կոնֆլիկտային վարքի հակվածության ախտորոշման» հարցարանը:

Հետազոտության առարկան է դեռահասների վարքը կոնֆլիկտային իրավիճակում:

Հետազոտության օբյեկտում 14-17 տարեկան դեռահասներն են:

ԳԼՈՒԽ 1. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ, ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Դեռևս Արիստոտելն է նշել.<<Ընտանիքը հասարակության բջիջն է>>: Այսինքն հասարակությունը, հետևաբար նաև պետությունը կարող են առողջ լինել, եթե առողջ և կայուն է ընտանիքը: Ըստ մասնագետների հոգեբանորեն առողջ է այն ընտանիքը, որում փոխհարաբերությունները ձևավորված ու կայուն են թե ամուսինների, թե ծնողների ու երեխաների միջև: Այսինքն առողջ ընտանիքում տիրում է դրական բարոյա- հոգեբանական մթնոլորտ: Ցավոք ոչ բոլոր դեպքերում է այդպես: Բոլոր ժամանակներում էլ ընտանիքներում տարբեր պատճառներով ծագում են կոնֆլիկտներ:

Վերջին ժամանակներում ընտանեկան հարաբերություններն էական փոփոխությունների են ենթարկվել: Ավելացել է բջջային՝ ամուսիններից և երեխաներից կազմված ընտանիքների թիվը: Փոխվել են ընտանիքում ամուսինների գործառույթները, նրանց արժեհամակարգը, վերաբերմունքը երեխաների նկատմամբ, դաստիարակության մեթոդները:

Շատ կարևոր է ուսումնասիրել ընտանեկան հարաբերություններում տեղի ունեցող տեղաշարժերը, ընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ներդաշնակ ձևավորման վրա:

Ըստ վիճակագրական տվյալների ընտանեկան կոնֆլիկտների հիմնական պատճառը հաղորդակցման կուլտուրայի, փոխադարձ վստահության, քաղաքավարության, ուշադրության, նրբազգացության բացակայությունը: Կոնֆլիկտների պատճառ կարող են հադիսանալ նաև հոգեբանական անհամատեղելիությունը, սեռական խնդիրները, միմյանց մտադրությունները չհասկանալը, վարքի սխալ մեկնաբանությունները, բարոյականության վերաբերյալ տարբեր մոտեցումները, կրթական ցածր մակարդակը, պատասխանատվության զգացումի բացակայությունը և այլն:

Կապված կոնֆլիկտների հաճախականությունից, խորությունից և սրությունից, առանձնացնում են ներոտիկ, ճգնաժամային, կոնֆլիկտայինն պրոբլեմային ընտանիքներ.

. Ներոտիկ ընտանիքներ, որտեղ զույգի մոտ նկատվում են տագնապայնության բարձր մակարդակ, քնի խանգարում, ագրեսիվություն:

. Ճգնաժամային ընտանիքներ, որտեղ ամուսինները թշնամաբար են տրամադրված

միմյանց նկատմամբ, հակված չեն փոխզիջման, անհանդուրժող են:

. Կոնֆլիկտային ընտանիքներ, որտեղ գույզի մոտ առաջ են գալիս բացասական հուզական վիճակներ, կոնֆլիկտներ որոնք սակայն լուծվում են փոխզիջումային տարբերակով:

. Պրոբլեմային ընտանիքներ, որտեղ առկա խնդիրների, կյանքի ծանր պայմանների արդյունքում ընտանիքը հայտնվում է անկայուն վիճակում:

Հոգեբանների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 80-85 տոկոս ընտանիքներում առկա են կոնֆլիկտներ, իսկ մնացած 15-20 տոկոսի մոտ տարբեր պատճառներով վեճերի առկայություն: Կոնֆլիկտային իրավիճակներում հաճախակի հուզական պոռթկումները, բռնությունները և հիստերիկ դրսևորումները կարող են լրջորեն խաթարել ընտանիքի ամրությունը, մանկահասակ երեխաների և դեռահասների հոգեկան առողջությունը: Նրանք ունենու են անձնային զարգացման խեղաթյուրումներ և վարքի խանգարումներ

ԳԼՈՒԽ 2. ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՀԵԳԵԲԱՆԱԿԱՆԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Դեռահասության ընդհանուր նկարագիր

Դեռահասությունը նշանավորվում է մարմնի բուռն, պայթյունավտանգ, անատոմիական և ֆիզիոլոգիական վերակառուցմամբ: Համընկնում է միջնակարգ դպրոցի 5-8 դասարանների հետ և ընդգրկում են 11-12 տարեկանից մինչև 14-15 տարեկանը: Սակայն զարգացման այս փուլում հայտնվելը նույնիսկ կարող է չհամընկնել 5-րդ դասարան փոխադրվելու հետ, և կարող է լինել մեկ տարի ուշ կամ շուտ:

Դեռահասի զարգացման պրոցեսում այս փուլը առանձնահատուկ տեղը, իր արտահայտությունն է գտել նրա այլ անվանումներում. «անցումային», «դժվար» կամ «ճգնաժամային» շրջան: Սրանցում ընդգծված է այդ շրջանում տեղի ունեցող զարգացման պրոցեսների բարդությունն ու կարևորությունը, որոնք կապված են կյանքի մեկ փուլից մյուսին անցնելու հետ: Մանկությունից հասունությանը կատարվող անցումը այդ փուլում տեղի ունեցող զարգացման բոլոր՝ ֆիզիկական, մտավոր, բարոյական և սոցիալական կողմերի հիմնական բովանդակությունն է և առանձնահատկությունը: Ըստ այդ բոլոր կողմերի տեղի է ունենում որակապես նոր կազմավորումների առաջացում: Օրգանիզմի, ինքնագիտակցության, չափահասների ու ընկերների հետ ունեցած հարաբերությունների,

սոցիալական փոխներգործության ձևերի, հետաքրքրությունների, իմացական գործունեության, ինչպես նաև վարքը, ողջ գործունեությունն ու հարաբերությունները միջնորդավորող բարոյաէթիկական դիրքորոշումների բովանդակության վերակառուցման հետևանքով երևան են գալիս հասունության նշաններ: Դեռահասի անձի զարգացման առաջին գործոնը հենց իր հասարակական մեծ ակտիվությունն է: Սրա նպատակն է վարքի որոշակի նմուշների և արժեքների յուրացումը, չափահասների ու ընկերների հետ հարաբերությունների հաստատումը: Այդ ակտիվության օբյեկտն է նաև ինքը՝ դեռահասը: Նա ծրագրավորում է իր անձն ու ապագան և փորձ է կատարում իրականացնել իր մտադրությունները, նպատակներն ու խնդիրները:

Սակայն նորի գոյացումը ժամանակ է պահանջում: Այն կախված է մեծ թվով պայմաններից և, դրա հետևանքով, ըստ բոլոր կողմերի կարող է նույնանման հաջողությամբ չիրագործվել: Ահա թե ինչու դեռահասի մոտ գոյակցում են «մանկականությունն» ու «հասունությունը»: Մյուս կողմից, նույն տարիքն ունեցող տարբեր դեռահասների մոտ էական տարբերություններ են նկատվում ըստ հասունության տարբեր դրսևորումների զարգացման մակարդակի: Այս հանագամանքը կապված է ժամանակակից դպրոցականների կյանքի պայմաններում երկու տեսակի գործոնների առկայության հետ: Առաջինները /հիմնականում ուսումնական գործունեությամբ զբաղված լինելը և այլ կայուն ու լուրջ պարտականությունների բացակայությունը, դեռահասներին կենցաղային գործերի աշխատանքից, հոգսերից ու դառնություններից ազատելու միտումը, որը նկատվում է ծնողներից շատերի մոտ, ամեն ինչում խնամակալելու հակումը/ արգելակում են հասունության զարգացումը: Երկրորդ խումբը կազմող գործոնները հասունացնող բնույթ ունեն/ ինֆորմացիայի հսկայական հոսքը, ֆիզիկական զարգացման և սեռական հասունացման աքսելերացիան, ծնողներից շատերի գերզբաղվածությունը և սրա հնարավոր հետևանքներից մեկը՝ դեռահասների վաղահաս ինքնուրույնությունը/: [10]

Տեղի ունեցող ֆիզիկական, սակայն փոքր փոփոխությունները նույնպես նպաստում են դեռահասի ինքնագնահատականի նվազմանը, ինչպես նաև կարող է կատարվել ճիշտ հակառակը, նրանց թվա, թե իրենք ավելի ուժեղ են, դառնում են էլ ավելի ինքնավստահ թե ընտանիքում, թե շրջապատում: Նրանք չեն ցանկանում այլևս «փոքր» համարվել, ձգտում են ընդլայնել իրենց իրավունքները, ցանկանում են դառնալ ավելի անկախ, սակայն պատրաստ են ընդունել իրենցից բարձր՝ մեծահասակների պահանջները, մինչդեռ հասակակիցներինը ոչ: Հակառակ սեռի նկատմամբ հետաքրքրությունը, որն առաջանում է սեռական

հասունացման շրջանում խորացնում է հասուն տարիքի փորձը և փոխում դեռահասի հուզական ոլորտը՝ առաջացնելով նոր, մինչ այժմ անձանոթ փորձառություններ և դրանք հասկանալու ցանկություն: Հետևաբար, դեռահասների շրջանում կարիք կա հասկանալու նրանց փորձառություններին, այստեղից էլ՝ մտերիմ, հավատարիմ ընկեր ունենալու ցանկությունը: Պատահական չէ, որ շատ հետազոտողներ կարծում են, որ իրական մտերմության ձևավորումը սկսվում է հենց այս ժամանակահատվածում: Մարմնի հասունացման գործընթացին զուգընթաց, դեռահասի հուզական ոլորտում դրա հետ կապված փոփոխություններից գատ նոր մակարդակի են բաժրանում նաև ինտելեկտուալ կարողությունները: Ուսումնական գործունեության ձևերի բարդացումը, դասերի յուրացումը, ենթակա նյութերի ծավալի ընդլայնումը, մի կողմից հասկացությունների մեջ մտածողության ձևավորումը, հորիզոնների ընդլայնումը, առաջացումը, մյուս կողմից նոր հետաքրքրությունները հանգեցնում են ճանաչողականմակարդակի փոփոխականության և նրանց ինտելեկտուալ հնարավորություններիգնահատման: Կատարվում է և ֆիզիկական զարգացում, և առաջխաղացում ինտելեկտուալ ու ճանաչողական հարթություններում, և հուզական ոլորտում փոփոխություններ, ընթանում է նաև դեռահասի նոր վերաբերմունքի ձևավորումը՝ իր և իր դիրքի նկատմամբ:

Այս ամենից հետո դեռահասը իր ներսում սկսում է ձրհավորել նոր դիրք և դրանով հանդես գալ: Միննույն ժամանակ օբյեկտիվորեն շարունակում է մնալ նախկին դիրքում, այսինքն՝ նույն դեռահասը, որը ղեկավարվում է դպրոցում և ում մասին հոգ են տանում ընտանիքում: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դեռահասներից քչերն են հեշտ կողմնորոշվում մասնագիտություն ընտրելու հարցում, չունեն հեռանկարներ ապագայի վերաբերյալ, ինչպես նաև պատասխանատվության զգացումն առավել նվազ է: Մեկ այլ հոգեբանական ուսումնասիրություն ցույց է տվել, որ դեռահասների «չափահասության» ձգտման մեջ գերակշռում է իրավունքներ ձեռք բերելու ցանկությունը, նոր ներքին դիրքորոշման և նախկին օբյեկտիվ դիրքորոշման անհամապատասխանությունը դառնում է դեռահասության «ճգնաժամի» հիմնական պատճառներից մեկը: Ճգնաժամը կարելի է «մեղմել» այս տարիքի դպրոցականների հետ (14-17տ.) աշխատանքի այնպիսի ձևեր գտնելով, որոնք նրանց հնարավորություն կտան ավելի մեծ չափով իրացնել իրենց ներուժը, քան հիմա: Պետք է որոշակի կերպով ուղղորդել դեռահասի ձգտումը դեպի սոցիալական նոր դիրք, որում այդ հակասությունը ոչ թե կվերացվի, ապա գոնե որոշակիորեն կհարթվի: Բացի այդ պետք է ասել, որ յուրաքանչյուր նորագոյացության ի հայտ գալը նույնպես կուղղորդվի

«ներքին» կոնֆլիկտով: [11]

Դեռահասների հասունացման ընդհանուր ուղղությունը կարող է տարբեր լինել, իսկ ուղղություններից յուրաքանչյուրն էլ կարող է շատ տարբերակներ ունենալ: Օրինակ՝ «մտավորականներից» (նույն ինքը դեռահասը) մեկի համար գրքերն ու գիտելիքները կյանքում կարող են գլխավորը լինել, բայց մնացած տեսակետներից նա կարող է «մանուկ» լինել: Դասարանի «մտավորականներից» մեկ ուրիշը տանը կարող է էլեկտրոնիկայի վերաբերյալ հոդվածներ կարդալ և հափշտակված լինել ռադիոտեխնիկայով, բայց դասերի ժամանակ կարող է անգործության մատնվել, չափից ավելի հոգ տանել իր արտաքին տեսքի մոդայիկ լինելու մասին: Նա ամենից ավելի բարձր կարող է գնահատել իրենից ավելի հասուն տղաների հետ շփվելը, որոնց հետ կարելի է խոսել ամեն ինչի մասին՝ սկսած կյանքի իմաստից մինչև լավագույն վարսավիրանոցը: Երբորդ «մտավորականին» հասունության արտաքին դրսևորումները կարող են առանձնապես չիրապուրել, բայց նա կարող է եռանդուն կերպով այրական որակներ դաստիարակել և, միաժամանակ, աղջիկների շրջապատում իրեն պահել, նրանց կարծիքով, երեխայի նման, քաշել փողկապից, խառնել սանրվածքը: Բոլոր այդ երեք տարբերակներում, որոնք նման են ըստ մեկ հիմնական պարամետրի (բնութագրող մեծության), հասունության զարգացումը տարբեր կերպ է ընթանում և ձևավորվում են տարբեր բովանդակություն ունեցող կենսական արժեքներ: Դեռահասության փուլը կարևոր է նրանով, որ այստեղ դրվում է անձի բորոյական ու սոցիալական դիրքորոշումների հիմքը և ուրվագծվում է դրանց հետագա զրգացման հիմնական ուղղությունը:

Դեռահասության փուլը ընդունված է համարել դժվարին ու ճգնաժամային: Այդպիսի գնահատականը առաջին հերթին պայմանավորված է այն մեծաթիվ որոկական տեղաշարժերով, որոնք երբեմն կրում են երեխայի նախկին առանձնահատկությունների, հետաքրքրությունների ու հարաբերությունների արմատական բեկման բնույթ: Այս փոփոխությունները կարող են կատարվել համեմատաբար կարճատև ժամանակահատվածում, հաճախ անսպասելի են և զարգացման պրոցեսին հաղորդում են բուռն ու թռիչքաձև բնույթ: Կատարվող փոփոխությունները, բացի դրանից, հաճախ ուղեկցվում են հենց դեռահասի հոգեկանում տարատեսակ սուբյեկտիվ դժվարությունների առաջացմամբ և, մյուս կողմից, դժվարացնում են նրան դաստիարակելը, քանի որ դեռահասը չի ենթարկվում չափահասի ներշնչումներին, նա դառնում է անհնազանդ, դիմադրություն է ցույց տալիս և բողոքում է: Այս ամենը արտահայտվում է կամակորության,

կոպտության, նեգատիվիզմի, ըմբոստության, մեկուսացվածության և գաղտնապահության ձևով:

Մոտ կես դար է, ինչ տեսական վիճաբանություններ են ծավալվել այն հարցի շուրջ, թե դեռահասության փուլում զարգացման ճգնաժամային երևույթների առաջացման գործում ինչ դեր են խաղում կենսաբանական ու սոցիալական գործոնները:

2.2 Դեռահասների փոխհարաբերությունները չափահասների և հասակակիցների հետ

Ինչպես գիտենք, նոր մարդկանց հետ շփման և նոր փոխհարաբերությունների կարիքը դեռահասության տարիքում դառնում է ավելի պահանջված և ինտենսիվ, քան մանկության նախորդ շրջաններում: Նոր իրավունքներ ունենալու իր հավակնությունը դեռահասը տարածում է մեծերի հետ ունեցած փոխհարաբերությունների բոլոր կողմերի վրա: Դեռահասը սկսում է դիմադրություն ցույց տալ այն պահանջներին, որոնք նա առաջ հաճույքով էր կատարում: Նա վիրավորվում և բեղոքում է, երբ սահմանափակում են իր ինքնուրույնությունը և, ընդհանրապես, որպես «փոքրի», հոգ են տանում իր մասին, ուղղություն են ցույց տալիս, վերահսկում են, պահանջում են հնազանդ լինել, պատժում են, հաշվի չեն առնում իր հետաքրքրությունները, հարաբերությունները, կարծիքները և այլն: Դեռահասը ձեռք է բերում սեփական արժանապատվության խիստ սուր զգացում, նա իրեն գիտակցում է որպես մարդու, որին չի կարելի ճնշել, ստորացնել, զրկել ինքնուրույնության իրավունքից: Մանկության տարիներին չափահասների հետ ունեցած հարաբերությունների դերը, որն արտացոլում էր մեծերի շրջապատում երեխայի ունեցած անիրավահավասար դիրքը, նրա համար դառնում է անընդունելի և սեփական չափահասության մակարդակին չհամապատասխանող: Չափահասների իրավունքները նա սահմանափակում է, իսկ իր իրավունքների սահմանները՝ ընդլայնում, պահանջելով, որ հարգեն իր անձն ու մարդկային արժանապատվությունը, վստահեն իրեն, ավելի շատ ինքնուրույնություն տան, հավասար համարեն մեծերի հետ: Նա ձգտում է հասնել այն բանին, որպեսզի մեծերը ընդունեն իր պահանջները: Բողոքների ու անհնազանդության տարբեր դրսևորումները միջոց են ծառայում չափահասների հետ ունեցած նախկին հարաբերությունները փոխելու և շփման նոր ձևերի հաստատման համար: Դեռահասի հոգեկանում չափահասության զգացման առաջացումն ու շրջապատողների կողմից այն ընդունված տեսնելու պահանջը կյանքի է կոչում բոլորովին նոր մի խնդիր. թե ինչպիսի՞ իրավունքներից պետք է օգտվեն դեռահասն ու չափահասը՝ միմյանց հետ փոխհարաբերությունների ժամանակ:

Դեռահասության փուլի կարևորությունն ու առանձնահատուկ տեղը պայմանավորված ենքանով, որ չափահասի և դեռահասի միջև հաստատված և մանկության տարիքին հատուկ հարաբերությունները հենց այսպես են փոխարինվում այնպիսի փոխհարաբերություններով, որոնք հատուկ են չափահաս մարդկանց շփման պրոցեսներին: Այդ անցումը իրենից ներկայացնում է դեռահասի և չափահասի սոցիալական փոխներգործությունների նոր եղանակների կազմավորման պրոցես:

ԾՆՈՂ-ԴԵՌԱՀԱՍ ՓՈԽՂԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

Պետք է ասել, որ մեծահասակների հետ հարաբերությունները առաջին հայացքից բարդ են, կարելի է ասել հակասական: Մի կողմից ինչպես տեսնում ենք դեռահասների մեծ մասը կապված է ծնողների հետ, իսկ մյուս կողմից նրանք ցանկանում են պահպանել իրենց «չափահասության» իրավունքները և այդպես պաշտպանում են իրենց: Միշտ չէ, որ ծնողները կամ խնամակալները լուրջ են վերաբերվում այդ փոփոխություններին, ինչի արդյունքում առաջանում են կոնֆլիկտներ: Դեռահասին խնամում են ինչպես փոքրիկ երեխայի, սակայն չափից դուրս խնամելն ու հոգ տանելն էլ կարող է կենֆլիկտ առաջացնել նրանց միջև, քանի որ նա ցանկանում է իր մտադրություններն ու ցանկությունները առաջ քաշել և հասնել իր ուզածին: Նա մեծերի գործողությունները կարող է ընկալել, որպես անհարգալից վերաբերմունք իր նկատմամբ: Նման դեպքերում դեռահասը դառնում է կոպիտ, անհանդուրժող, երբեմն անկառավարելի, դիմադրում է ցանկացած ազդեցության: Միևնույն ժամանակ դեռահասի պահվածքը ոչ միշտ է, որ համապատասխանում է իր իրական ցանկությանը և զգացմունքներին: Հաճախ նա գոչում է ծնողի հետ կոպիտ խոսելու կամ նրան կոպիտ պատասխանելու համար, սակայն նրանց հետ նորմալ շփման ուղիներ չի գտնում: «Հակամարտությունները» ձգձգվում են և խորանում, ծնողները, չիմանալով ինչ անել, կամ ինչպես վարվել, և չգտնելով համապատասխան լուծում գնում են շատ լուրջ քայլերի, սկսում են ավելի «ճնշել» կամ էլ պահանջել, որ իրենց քայլերի և արարքների համար ստանձնեն պատասխանատվություն: Եվ այսպես ոչ մեկը, ոչ էլ մյուսը չեն տալիս կոնֆլիկտի արդյունավետ լուծման տարբերակ, ուղղակիորեն պետք է հասկանալ և խոսել դեռահասի հետ, կատարվի շփում ծնող- դեռահաս, ծնողը փորձի հասկանալ իր երեխայի վարքի դրսևորման պատճառները, իսկ դեռահասն էլ իր հերթին փորձի ավելի ազդեցիվ վարք չդրսևորել, և այսպես հնարավոր կլինի որոշակիորեն խուսափել կոնֆլիկտներից և փորձել ապրել խաղաղ[11]:

ԴԵՌԱՀԱՍԻ ՇՓՈՒՄԸ ԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ:

Ներքին դիրքի փոփոխությունները հանգեցնում են նրան, որ դեռահասի համար այլևս բավարար չէ լինել լավ աշակերտ, ունենալ բարձրագույն կրթություն և ստանալ ուսուցչի հավանությունը: Նրա համար շատ ավելի կարևոր է լավ ընկերոջ համբավ ձեռք բերելը, հասակակիցների վստահությունն ու հարգանքը վայելելը, մտերիմ ու մշտական ընկերներ ունենալը: Նա ստեղծում է իր միջավայրն ու շրջապատը, ինքն է ընտրում, թե ովքեր կարող են դառնալ նրա մտերիմները և, ովքեր կարող են տեղ ունենալ նրա կյանքում. սկսվում է նրա անհատականության հետագա զարգացումը: Դեռահասների վարքագծի և ուսուցման առաջատար շարժանիքն է շրջապատում գտնել իրենց տեղն ու դերը:

Համադասարանցիների հետ դեռահասի հարաբերությունները ավելի բարդ, բազմազան ու բովանդակալից են, քան կրտսեր դպրոցականի հարաբերությունները: Հենց դեռահասության շրջանում են ձևավորվում այն բազմատեսակ և ըստ մտերմության աստիճանի միմյանցից զգալիորեն տարբերվող հարաբերությունները, որոնք հստակորեն տարբերվում են դեռահասի կողմից: Նա ունենում է պարզապես ընկերներ, մտերիմ ընկերներ և անձնական բարեկամ: Սրանց հետ ունեցած կապերը աստիճանաբար դուրս են գալիս դպրոցի և ուսումնական գործունեության շրջանակներից, ընդգրկում են նոր հետաքրքրություններ ու զբաղմունքներ: Շփումը դեռահասի համար աստիճանաբար դառնում է կյանքի ինքնուրույն և շատ կարևոր ոլորտ: Այն հազեցած է լինում տարբեր իրադարձություններով ու դեպքերով, պայքարով ու բախումներով, հաղթանակներով ու պարտություններով, հայտնագործություններով ու հուսախաբություններով, որոնք էլ ընհանուր առմամբ կազմում են դեռահասի կյանքը: Ընկերների հետ շփվելը դեռահասի համար հաճախ այնպիսի մեծ արժեք է ներկայացնում, որ հետին պլան է մղում ուսման գործը և նվազ գրավիչ է դարձնում ծնողների հետ շփվելը: Այս հանգամանքը, սովորաբար բոլորից շուտ նկատում է մայրը: Նա տեսնում է, որ որդին /կամ դուստրը/ հեռանում է իրենից, ապրում է իր յուրահատուկ կյանքով, այդ մասին ոչինչ չի պատմում և ձգտում է տնից դուրս և ընկերների մոտ լինել:

Դեռահասների մոտ հստակորեն դրսևորվում են միմյանց հետ փոխկապակցված երկու ձգտում: Առաջինը իր հասակակիցների հետ շփվելու և համատեղ գործունեություն կատարելու ձգտումն է, կոլեկտիվ կյանքով ապրելու, մոտ ընկերներ, բարեկամ ունենալու ցանկությունը: Մյուս, ոչ պակաս ուժեղ, ցանկությունը ընկերների կողմից ընդունված,

գնահատված ու հարգված լինելու պահանջմունքն է, որը դեռահասի կյանքում չափազանց կարևոր է դառնում: Համադասարանցիների հետ ունեցած վատ հարաբերությունները, մտերիմ ընկերներ ու բարեկամ չունենալը, կամ բարեկամական կապերի խզումը ծանր ապրումներ են առաջացնում ու գնահատվում են որպես անձնական դժբախտություն: Դեռահասի համար ամենատհաճ իրադրությունը շրջապատի կողմից դատապարտվելն է, իսկ ամենաձանր պատիժը՝ բացահայտ կամ թաքուն բոյկոտը, շփվել չցանկանալը: Մենակությունը դեռահասի համար ծանր ու անտանելի վիճակ է: Եթե համադասարանցիների հետ անբարենպաստ հարաբերություններ են ստեղծվել, ապա այս հանգամանքը դեռահասին ստիպում է ընկերներ ու բարեկամներ որոնել դպրոցից դուրս:

Մեր երկրում կրտսեր դեռահասը իր անձի կառուցվածքով հասարակական ուղղվածություն ունի: Նրա վրա ուժեղ տպավորություն են գործում կյանքի ու գործունեության կոլեկտիվ ձևերը: Նա ձգտում է հասարակական աշխատանք կատարել, սիրում է այդ աշխատանքը, որը տվյալ տարիքի երեխաների համար դաստիարակչական մեծ նշանակություն ունեն և բովանդակալից հիմք է ստեղծում դեռահասների շփման համար, նրանց թույլ է տալիս դրսևորելու ինքնուրույնություն, ակտիվություն և նախաձեռնողություն: Ցանկացած միջոցառում կազմակերպելիս նրանք գերասաղում են լինել ոչ թե հայեցողներ, այլ գործում մասնակիցներ

Բարեկամների և մտերիմ ընկերների միջև դեռահասության տարիքում հաստատվող հարաբերությունների առանձնահատկությունն այն է, որ դեռահասները դաստիարակում են միմյանց, քանի որ նրանցից յուրաքանչյուրը մյուսի վարքի և ցուցաբերած վերաբերմունքի նկատմամբ որոշակի պահանջներ է առաջադրում և հետևում է դրանց կատարմանը: Եթե այդ պահանջները չեն կատարվում, ապա որպես պատժի միջոց օգտագործվում է այնպիսի մի ուժեղ հնար, ինչպիսին շփվելուց հրաժարվելն է: Անձի զարգացման համար մտերիմ ընկերների և բարեկամների հետ շփվելն ունի այն առանձնահատուկ նշանակությունը, որ իրենից ներկայացնում է չափահաս մարդկանց համար բնորոշ միջմարդկային, անձնային հարաբերությունների կանոններին տիրապետելու փորձ: Բարեկամական հարաբերությունների կանոնների յուրացումը դեռահասության տարիքում դեռահասի կարևորագույն ձեռքբերումն է:

Տղաների և աղջիկների փոխհարաբերությունների առանձնահատկությունները: Դեռահասության տարիքում տղաների և աղջիկների փոխհարաբերությունները էական փոփոխություններ են կրում: Նրանք սկսում են հետաքրքրվել միմյանցով, ցանկանում են

դուր գալ միմյանց: Սրա հետ կապված ուժեղանում է հետաքրքրությունը նաև սեփական արտաքինի նկատմամբ: Դեռահասը սկսում է հոգ տանել գրավիչ երևալու մասին: Ֆիզիկական զարգացման և սեռական հասունացման տեսակետից աղջիկները առաջ են անցնում տղաներից: 5-6-րդ դասարաններում աղջիկներն ավելի բարձրահասակ ու խոշորամարմին են, քան տղաները: Ցածր հասակը տղաների համար հաճախ տհաճ ապրումների և թերարժեքության զգացման պատճառ կարող է հանդիսանալ: Բայց նման ապրումներ կարող են ունենալ այն աղջիկները, որոնք ֆիզիկական զարգացմամբ առաջ են անցել համադասարանցիներից:

Մյուս սեռի ներկայացուցիչների նկատմամբ հետաքրքրությունը սկզբում շատ տղաների մոտ ունի ծավալուն, ընդհանրացված բնույթ: Սրա տիպական դրսևորումները կրտսեր դեռահասի մետ ստանում են աղջիկներին «գժվեցնելու» յուրահատուկ ձևը: Վերջիններս հաճախ են բողոքում տղաներից, բայց այդ գործողությունների դրդապատճառները ճիշտ են հասկանում և լրջորեն չեն նեղանում: Ավելի ուշ այդ հարաբերությունները կորցնում են իրենց անմիջականությունը, առաջ են գալիս ամաչկոտություն, երկչոտություն: Որոշ դեռահասների մոտ այս ամենը ձևավորվում է ուղղակիորեն, մյուսները դրանք թաքցնում են արհեստական անտարբերության կամ հակառակ սեռի նկատմամբ «արհամարհանքի» քողի տակ: Դեռահասի վարքը երկարժեք է դառնում, միմյանցով հետաքրքրվելով հանդերձ տղաներն ու աղջիկները մեկուսանում են իրարից: Միաժամանակ նրանք մեծ հետաքրքրությամբ հետևում են առաջացող փոխհարաբերություններին և դրանց զարգացման առանձնահատկու-թյուններին:

Դեռահասի անձնավորության զարգացման համար բավականին լուրջ նշանակություն ունի հակառակ սեռին պատկանող հասակակիցների նկատմամբ ցուցաբերվող հետաքրքրությունը: Համակրելի անձնավորության նկատմամբ դրսևորվող ուժեղ ուշադրությունը հանգեցնում է դիտողականության, ընտրականության, համակրելի անձնավորության վարքի, արարքների, հակազդումների, ներհոգեկան վիճակների, տրամադրությունների ու ապրումների փոփո-խությունները նկատվում են ամենայն նրբությամբ: Հետաքրքրություն է առաջանում նաև սեփական ներքին այն վիճակների նկատմամբ, որոնք առաջանում են հակառակ սեռի ներկայացուցչի հետ շփվելու հետևանքով: Ռոմանտիկական հրապուրվածությունը մոբիլիզացնում է անձի հնարավորությունները, նրանում ավելի լավ լինելու ցանկություն է առաջացնում, դրդում է հաճելի գործեր կատարել, օգնել ու պաշտպանել մարդկանց: Այդ զգացմունքը

ինքնակատարելագործման դրդապատճառներից մեկն է դառնում:

Այսպիսով՝ ընկերների հետ շփվելը դեռահասության տարիքում հսկայական, երբեմն վճռական ազդեցություն է գործում անձի ձևավորման վրա: Ընկերները ընդօրինակման օբյեկտներ են դառնում: Նրանք ակտիվորեն ազդում են միմյանց վրա, դաստիարակում են միմյանց: Ահա թե ինչու մանկավարժական ներգործության ոլորտում պետք է ընդգրկվեն դեռահասների գործնական, այլև մտերմիկ փոխհարաբերությունները:

Դպրոցը և դեռահասը: Այսօր տեղեկատվական զարգացած աշխարհում անհասանելին դառնում է հասանելի: Ուստի դժվար է և նույնիսկ սխալ՝ դեռահասին վերաբերվել այնպես, ինչպես դա կատարվում էր տասը և ավելի տարիներ առաջ:

Այսօրվա դեռահասը, որը 11-17 տարեկան է, եթե նույնիսկ համակարգիչ չլինի, հեռախոսով կապվում է աշխարհի իր հասակակիցների հետ: Այո, ժամանակակից դեռահասն ունի նաև հեռուստացույց, որի ցուցադրած տեսանյութերից միշտ չէ, որ կարող է լավ բան սովորել: Այստեղ մենք կարևորում ենք ուսուցչի դերը: Ուսուցիչը՝ հատկապես դասղեկը, պետք է իմանա դեռահասի տարիքային առանձնահատկությունները:

Դեռահասի բնավորության ամենաբնորոշ գծերից մեկն էլ ուրիշներին նմանվելու ձգտումն է: Ցավոք, շատ հաճախ նմանվում են (եթե դեռահասը բնավորությամբ ուրիշի ազդեցության տակ ընկնող է) վատին: Հաստատական և ուժեղ բնավորությամբ դեռահասներն են ձգտում նմանվել ուժեղներին:

Ուսուցչի աշխատանքի արդյունավետությունն ապահովող ամենակարևոր գործոնը աշակերտի արժանապատվությանը չդիպչելն է: Դա վերաբերում է հատկապես դեռահասներին: Ուսուցիչը՝ հատկապես դեռահասի հետ գործ ունեցող դասղեկը, անպայման պետք է հիշի, որ չպետք է կոպտի կամ վիրավորի աշակերտին: Միայն մանկավարժական վարպետություն ունեցող, ստեղծագործական և հետազոտական կարողություններով օժտված ուսուցիչը կկարողանա կարգալ դեռահասի՝ մյուսներին անձանոթ հոգու այբուբենը:

Ուսուցչի գործունեության բանալին առաջին հերթին հասարակական հաղորդակցության նրբություններին տիրապետելն է: Այնքան բարձր պետք է լինի իմացության մակարդակը, որ նա կարողանա օգնել աշակերտին՝ հաղթահարելու իր առջև ծառայած դժվարությունները և խթանել նրա ինքնուրույնությունը գործունեության բոլոր ոլորտներում:

Լինում են տարբեր տիպի՝ նյարդային, ընկճված հոգեվիճակներով, ինչպես նաև (որն

ամենացավալին է) դժվար դաստիարակվող դեռահասներ:

Այսպիսով՝ դասղեկի ամենաառաջին գործը իր աշակերտներին ճանաչելն է: Դասղեկը յուրաքանչյուր դասավանդող ուսուցչի պետք է ներկայացնի իր դասղեկական դասարանի աշակերտներին ըստ նրանց անհատական առանձնահատկությունների:

Աշակերին ըստ առանձնահատկությունների ընդունումը ճիշտ է, քանզի դասղեկը, ինչպես նաև դասավանդող ուսուցիչը պետք է իմանան, թե հոգեբանական որ խմբում կարելի է ընդգրկել յուրաքանչյուր աշակերտի: Օրինակ հանդիպում են նաև լավ սովորող աշակերտներ, որոնք գանգատվում են. «Որքան էլ կարդում եմ, չեմ հասկանում...»: Կամ այն ամենը, ինչ կա շրջապատում անհանգստացնում է նրանց: Այդպիսիք հաճախ գանգատվում են գլխացավից. . . Այդ նշաններն ի հայտ են գալիս նյարդայնությունից: Դասղեկը ծնողի հետ պետք է որոնի և գտնի նման երևույթները ծնող պատճառները: Այստեղ արդեն կարևորում են հոգեբանական թեստի անկացումը՝ անհատական գրույցները նման դեռահասների հետ [4,5,6]:

2.3 Ինքնագիտակցության զարգացումը դեռահասության տարիքում

Ինքնագիտակցության կարգավորող ազդեցությունը սոցիալական վարքի վրա: Դեռահասության փուլին անցնելը նշանավորվում է երեխայի ինքնագիտակցության զարգացման որոկական տեղաշարժերով: Դեռահասը նոր փոխհարաբերություններ է հաստատում շրջապատի հետ և իրեն սկսում է գիտակցել որպես անձնավորություն, որը բոլոր հասուն մարդկանց նման, ունի ինքնուրույնություն, վստահություն ու հարգանք վայելելու իրավունք: Չափահասների աշխարհից նա ինտենսիվորեն յուրացնում է տարբեր արժեքներ, վարքի կանոններ ու եղանակներ, որոնք նրա գիտակցության նոր բովանդակություններն են կազմում, դառնում են ուրիշների և սեփական վարքագծի ներկայացվող պահանջներ, գնահատման և ինքնագնահատման չափանիշներ: Լ. Ս. Վիգոտսկու բնորոշմամբ, ինքնագիտակցությունը անձի ներքնայնացված սոցիալական գիտակցությունն է:

Իր անձի մասին կրտսեր դպրոցականի ունեցած պատկերացումն ու ինքնագնահատականը հիմնականում ձևավորվում են չափահասների, հատկապես ուսուցիչների և ծնողների, արժեքավոր դատողությունների հիման վրա: Իր առանձնահատկությունների մասին երեխան հատուկ կերպով չի խորհրդածում: Սեփական հատկությունների մասին գիտելիքներ ունենալու պահանջմունքը, իր անձի նկատմամբ

հետաքրքրությունը և համապատասխան խորհրդածությունները դեռահաս երեխաներին բնորոշ առանձնահատկություններն են: Սեփական թերություններն ու հատկությունները իմանալու պահանջմունքը ծագում է այլ՝ մարդկանց և հենց իր պահանջներին պատասխան տալու, շրջապատողների հետ հարաբերությունները կարգավորելու անհրաժեշտությունից: Դեռահասը ինքնավերլուծություն է կատարում մարդկանց հետ իր փոխհարաբերություններն ու գործունեությունը կազմակերպելու, ներկայում և ապագայում անձնային կարևորություն ներկայացնող խնդիրներ լուծելու համար: Սեփական անձը իմանալը դրա հիմնական պայմաններից մեկն է: Իր մասին խորհրդածելու սոցիալական ու կարգավորիչ դերը հստակորեն դրսևորվում է նրանում, որ դեռահասը սկզբնական շրջանում առավելապես ուշադրություն է դարձնում իր թերությունների վրա և դրանք վերացնելու կարիք է զգում, իսկ հետագայում՝ իր անձի վրա ամբողջությամբ վերցրած, փորձելով պարզել, թե ինչպիսի հնարավորություններ ու արժեքներ ունի: Թերությունների նկատմամբ հատուկ ուշադրությունը պահպանվում է դեռահասության ողջ ընթացքում: Շատերի մոտ սեփական անձից ունեցած դժգոհությունը քանի գնում աճում է: Իր մասին դեռահասի խորհրդածությունները կանխամտածված բնույթ ունեն, դառնում են ներհոգեկան ինքնուրույն պրոցես, որը նա ընկալում է որպես անհրաժեշտություն և նոր երևույթ՝ համեմատած կրտսեր դպրոցական տարիքի հոգեկան կյանքի բովանդակությունների հետ:

Իր անձի մասին դեռահասի խորհրդածությունների ծավալման կարևորագույն դրդապատճառը հասակակիցների շրջանում հարգված դիրք գրավելու և մտերիմ ընկեր, բարեկամ գտնելու ցանկությունն է: Հաճախ նա իր մասին սկսում է մտածել ընկերներից որևիցե մեկի հետ ունեցած փոխհարաբերությունների մասին խորհելիս կամ իրեն դուր եկած հասակակիցներից մեկին հիշելիս: Շատ կարևոր է այն հանգամանքը, որ հենց հասակակիցն է հանդես գալիս որպես համեմատվելու օբյեկտ ու նմուշ, որին դեռահասը կցանկանար նմանվել: Այդպիսի կողմնորոշման դեպքում համեմատությունը արդյունավետ է դառնում և պայմաններ են ստեղծում սեփականառանձնահատկությունները գիտակցելու և գնահատելու, ինքնադաստիարակվելու համար, քանի որ դեռահասի շփումն իր հասակակցի հետ համեմատելը և սեփական թերություններն ու հաջողությունները տեսնելը ավելի հեշտ է դառնում:

Դեռահասության տարիքի սկզբում երեխաները ավելի ճիշտ ու լավ են գիտակցում և գնահատում իրենց այն հատկությունները, որոնք կապված են ուսումնական

գործունեության հետ: Տարիքի հետ զուգընթաց սեփական անձի մասին պատկերացումը ընդլայնվում ու խորանում է և համապատասխան դատողությունները ավելի ինքնուրույն են դառնում: Սակայն դեռահասներից շատերը իրենց դրական որակները շատ բարձր են գնահատում և ունեն հավակնությունների այնպիսի մակարդակ, որը գերազանցում է նրանց իրական հնարավորությունները:

Չափազանց բարձր ինքնագնահատման կամ ուսուցչի կողմից տրվող չափազանց ցածր ինքնագնահատականի հետևանքով առաջանում են այնպիսի իրադրություններ, որոնք դեռահասին աֆեկտիվ վիճակի են հասցնում: Նա համոզված է, որ իրեն տրվող գնահատականն ու վերաբերմունքը ընդհանրապես անարդարացի է: Սակայն առաջին դեպքում նման պատկերացումը սխալ է, քանի որ դեռահասի հավակնությունների մակարդակը բարձր է նրա իրական հնարավորություններից: Երկրորդ դեպքում այն հիմնավորված է, քանի որ ուսուցիչը, երբ պարզում և ծանոթանում է դեռահասի հետ, ապա հարկավոր չէ նրա կարողությունները գնահատել ցածր և միանգամից մարել դեռահասի հույսերը և կոտրել նրան: Հարկավոր է ընդառաջ գնալ և աջակցել, որպեսզի չսուծի ոչ ուսուցիչը, ոչ էլ դեռահասը:

Տարիքային զարգացման հետ զուգընթաց դեռահասների ինքնագնահատումը դառնում է ավելի ու ավելի ճշգրիտ:

Դեռահասները ուրիշներին ավելի շատ ճիշտ են գնահատում, քան իրենց: Ընկերոջ առանձնահատկությունների իմացությունը այնքան ավելի խորն է, որքան ավելի սերտ են ունեցած հարաբերությունները և բազմակողմանի է շփման բովանդակալից հիմքը: «Ես նրան լավ գիտեմ նրա հետ չեմ կարող ընկերություն անել» հաճախակի են նման արտահայտություններ հնչում դեռահասների կողմից: Աստիճանաբար ավելի ու ավելի մեծ նշանակություն են ձեռք բերում անձի հոգեբանական կերպարը բնութագրող գծերը: 5-րդ դասարանում դեռահասները ամենից հաճախ մատնացույց են անում հասակակցի այն առանձնահատկությունները, որոնք վերաբերում են նրա արտաքինին, ուսումնական գործունեության և համադասարանցիների նկատմամբ ցույց տվող վերաբերմունքին, հետաքրքրություններին և կամային գծերին: Բայց հաջորդ դասարաններում տարբեր որակների առանձնացման հաճախականությունը փոփոխություններ է կրում: Արտաքին տեսքի և ուսման հետ կապված հատկությունները հաճախ ավելի ու ավելի քիչ են մատնանշվում: Անփոփոխ է մնում այն որակների առանձնացման հաճախականությունը, որոնք վերաբերում են համադասարանցիների հետ ունեցած փոխհարաբերություններին,

հետաքրքրություններին և կամքին: Դրանց վրա ցուցաբերվող ուշադրությունը մնում է նախկին բարձր մակարդակի վրա: Անշեղորեն աճում է մտածողության, զգացմունքների, սեփական անձի և իր ապագայի նկատմամբ վերաբերմունքի առանձնահատկությունների մասին կատարվող հիշատակումների հաճախականությունը:

Դեռահասը շփվող է, սիրում է կապեր հաստատել: Նրա համար շատ կարևոր է շրջապատողների բարի վերաբերմունքն ու բարձր գնահատականը: Այս պատճառով նա խիստ զգայուն է հատկապես իր հնարավորություններին վերաբերող գնահատականների, հաջողության ու անհաջողության նկատմամբ: Նա ձգտում է իրեն դրսևորել լավագույն կողմերով, արժանանալ հատկապես այն մարդկանց հավանությանը, որոնց գնահատականներն ու վերաբերմունքը նրա համար մեծ նշանակություն ունեն: Դեռահասի ինքնահաստատումը զանազան դրսևորումներ կարող է ստանալ: Որոշ երեխաներ ամաչկոտ ու վեհերոտ են, որովհետև վախենում են ցույց տալ իրենց անկարողությունն ու գիտելիքների սակավ լինելը:

Ինքնադաստիարակություն: Կրտսեր դեռահասները հաճախ չեն կարողանում ուրիշի աչքերով նայել իրենց և կառավարել իրենց վարքը: Բայց ավագ դեռահասների համարարդեն բնորոշ է սեփական հուզական բռնկումներն ու ընդհանրապես վարքը վերահսկելու ձգտումը: Նրանցից շատերը կարողանում են զսպել իրենց, իսկ անհրաժեշտության դեպքում թաքցնել իրական վերաբերմունքը, կարծիքը կամ տրամադրությունը: Վարքագիծը երկկողմանի է դառնում: Տարիքի հետ զուգընթաց ուժեղանում է գիտակցական ինքնակառավարման միտումը: Հաճախակի են դառնում տարբեր տեսակի զբաղմունքների անձնային իմաստի մասին մտորումները: Դրանց տրվում են տարբերակված բնորոշումներ, պետքական կամ ավելորդ, կարևոր կամ անկարևոր: Այդպիսի տարբերակումը հենվում է անձնական արժեքների ձևավորող համակարգի վրա: Առաջանում է ժամանակի արագահոս լինելու զգայություն, այն իզուր վատնելուց խուսափելու ձգտում, և ակտիվությունը պլանավորելու փորձեր են կատարվում: Մակայն կայացվող որոշումները հաճախակի հակասության մեջ են մտնում անմիջական ցանկությունների հետ, որոնք և մեծ մասամբ հաղթանակ են տանում: Դեռահասի «միտքն» ու «սիրտը» հաճախ են գժտվում: Նրանցից շատերը սեփական անկազմակերպվածությունը բացատրում են կամքի ուժի բացակայությամբ: Կամքի դաստիարակությունը դեռահասներից շատերի համար առաջնահերթ խնդիր է դառնում: Զուգահեռաբար դաստիարակվում են նաև այլ որակներ:

Դեռահասը սկսում է վերաբերմունք դրսևորել սեփական առաջընթացի նկատմամբ,

վերահսկում է իր զարգացումը, դառնություն է զգում, երբ չեն իրականանում իր պլաններն ու նպատակները: Հետազոտությունները ցույց են տվել, որ 7-8-րդ դասարանների աշակերտների մեծ մասը զբաղվում է ինքնադաստիարակությամբ, բայց ոչ բոլորի մոտ է այն հետևողական ու պլանաչափ: Սկզբունքորեն կարևոր է այդ պրոցեսի սկսվելը: Դեռահասության փուլում անձի զարգացման նոր ու կարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ դեռահասի համար գործունեության առարկան է դառնում հենց ինքը: Նա իրեն զսպում է, ձևափոխում, ստեղծում անձնային նոր որակներ: Ելնելով իր այսօրվա և ապագայի պահանջմունքներից, որպես կողմնորոշիչներ վերցնելով որոշակի նմուշներ և անձնային նշանակություն ունեցող նպատակներ ու խնդիրներ, նա ինքն է սկսումներգործել իր վրա, ձևավորում է իր անձը: Ինքնադաստիարակության և ինքնակրթության միջոցով դեռահասը ընդլայնում է իր զարգացման հնարավորություններն ու պատրաստվում է ապագայի համար: Կլանված լինելով ներկայով, նա միաժամանակ ուղղված է դեպի ապագան: Սեփական անձը ձևափոխելու և նոր որակներ ձեռք բերելու նպատակը հետապնդող գործունեության ի հայտ գալը հատուկ է դեռահասությանտարիքին և ցույց է տալիս, որ անձի զարգացումը անցում է կատարում որակապես նոր փուլի:

Վերոնշյալ գրեթե բոլոր փոխհարաբերություններում դեռահաս-ծնող, դեռահաս-ուսուցիչ, դեռահաս-հասակակից, դեռահաս-հակառակ սեռի ներկայացուցիչ, դեռահաս-սեփական անձ, անխուսափելի են կոնֆլիկտային իրավիճակները և այդ իրավիճակներում տարբեր են դեռահասների վարքային դրսևորումները:

Գլուխ 3 ԿՈՆՖԼԻԿՏԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

3.1. Ի՞նչ է կոնֆլիկտը. Կոնֆլիկտի տեսակները

Կոնֆլիկտի սահմանումը: Հոգեբանության մեջ կոնֆլիկտը սահմանվում է որպես միմյանց դեմ ուղղված անհամատեղելի միտումների բախում, որը ներառում է բացասական հուզական ապրումներ: Դա երկու կամ ավելի կողմերի միջև բախում և համաձայնության բացակայումն է:

«Կոնֆլիկտ» բառն ունի լատինական ծագում, որը նշանակում է դիմակայել, հակամարտել:

Կոնֆլիկտը մարդկային փոխազդեցության տեսակ է: Արևմտյան սոցիոլոգներն ու փիլիսոփաները այն համարում են սոցիալական զարգացման կարևորագույն գործոն: Անզլիացի փիլիսոփա և սոցիոլոգ Գ. Սպենսերը կոնֆլիկտը համարում էր՝ անխուսափելի

երևույթ մարդկային հասարակության պատմության համար և սոցիալական զարգացման խթան: Կոնֆլիկտը հաճախ զուգորդվում է ագրեսիայի, վեճերի, թշնամանքի և սպառնալիքների հետ:

Բ. Մ. Ռեբուսը կոնֆլիկտը բնութագրում է որպես մարդկանց գիտակցության մեջ միմյանց հանդեպ հակադարձ ուղղված և անհամատեղելի միտումների բախում՝ կապված բացասական սուր հուզական ապրումների հետ:

Ըստ Ա. Վ. Սերգեյչուկի՝ կոնֆլիկտը անհատների անհամատեղելի նպատակների, հետաքրքրությունների, դիրքորոշումների, կարծիքների, հայացքների բախում է:

Ի տարբերություն Բ.Մ.Ռեբուսի և Ա.Վ.Սերգեյչուկի՝ Ա. Մ. Ստոլյարենկոն կոնֆլիկտը բնութագրում է ոչ թե որպես բախում, այլ հակասություն. «Կոնֆլիկտը երկու և ավելի մարդկանց կամ խմբերի միջև սուր և դժվար լուծվող հակասություն է, որը բնութագրվում է հակամարտությամբ, հակասող կողմերի կողմից ուժեղ միջոցների փոխադարձ կիրառմամբ հակառակ կողմին հաղթելու նպատակով»: Գերմանացի իդեալիստ-փիլիսոփա և սոցիոլոգ Գ. Զիմմելը կոնֆլիկտն անվանելով «վեճ»՝ նշում էր, որ այն սոցիալականացման ձևերից մեկն է: Կոնֆլիկտի մեծագույն արժեքներից մեկն այն է, որ վերջինս կանխում է համակարգի քարացումը: Այն՝ որպես սոցիալական երևույթ, անկասկած, խիստ բացասական ազդեցություն ունի: Սակայն միևնույն ժամանակ կատարում է կարևոր դրական գործառույթ: Այն արտահայտում է դժգոհությունն ու բողոքարկումը, տեղեկացնում է կոնֆլիկտող կողմերի միմյանց հետաքրքրությունների և պահանջմունքների մասին:

Կոնֆլիկտի տեսակները:

Կոնֆլիկտը հասարակության մեջ մարդկային փոխհարաբերությունների սոցիալական կեցության կարևորագույն կողմերից է: Այն սուբյեկտների միջև հարաբերությունների տեսակ է, որոնց մոտիվացիան պայմանավորված է միմյանց հակադիր արժեքներով և նորմերով, հետաքրքրություններով և պահանջմունքներով: Սոցիալական կոնֆլիկտի էական կողմն այն է, որ սուբյեկտները գործում են կապերի առավել լայն համակարգի սահմանների ներսում, որը մոդիֆիկացվում /ձևափոխվում/ է, ամրանում կամ քայքայվում է կոնֆլիկտի ազդեցության ներքո:

Կոնֆլիկտի մեջ գտնվող յուրաքանչյուր կողմ կոնֆլիկտային իրավիճակն ընկալում է որպես որոշակի խնդիր:

Շփումը մարդկանց փոխներգործության և կապերի ամբողջություն է, որը ձևավորվում

է համատեղ գործունեության մեջ: Յուրաքանչյուր ոք որոշակի դեր է կատարում հասարակության մեջ: Եվ դերային այդ բազմազանությունը հաճախ բախումներ, այսինքն՝ դերային կոնֆլիկտներ է առաջացնում: Որոշ իրավիճակներում ի հայտ է գալիս դիրքերի, դիրքորոշումների անհաշտելի հակասություն, որն արտացոլվում է մեկը մյուսի բացառող արժեքների, խնդիրների և նպատակների առկայություն, որ երբեմն վերածվում է միջանձնային կոնֆլիկտի:

Գործունեության մեջ կոնֆլիկտի պատճառներն են՝ տարաձայնությունները, անձնական հետաքրքրությունների անհամապատասխանությունները, տարակարծությունը:

Կոնֆլիկտի առաջացման պատճառը շփման մեջ անհաղթահարելի իմաստային խոչընդոտներն են:

Կոնֆլիկտը հակասությունների սրման սահմանային վիճակն է:

Բազմաթիվ աշխատությունների վերլուծության հիման վրա Ն. Վ. Գրիշինան առաջարկում է սոցիալ-հոգեբանական կոնֆլիկտը սահմանել որպես շփման ոլորտում առաջացող և ընթացող բախում, որն ի հայտ է գալիս հակասական նպատակներից, վարքի միջոցներից, մարդկանց դիրքորոշումներից՝ որևէ նպատակի հասնելու ձգտման պայմաններում: Կոնֆլիկտի առաջացմանը նպաստում են թե օբյեկտիվ, թե սուբյեկտիվ գործոնների գուգակգումը: [1]:

Տարբերակում ենք կոնֆլիկտների երկու հիմնական տեսակ՝ արտաքին և ներքին:

Անձը կարող է բախման, կոնֆլիկտի մեջ մտնել այլ մարդկանց, խմբերի, նույնիսկ ողջ հասարակության հետ: Դրանք, անձի դիրքերից նայելու դեպքում, արտաքին կոնֆլիկտներ են: Օրինակ՝ երեխաների խիստ դաստիարակության եղանակների կողմնակից հայրը ամեն մի փոքրիկ սխալի համար երեխային խստորեն պատժում է, զրկում ազատությունից և մանրախնդիր վերահսկողության տակ պահում: Մինչդեռ մայրը կարող է լինել մեղմ, ազատական դաստիարակության, նույնիսկ լիբերալ /թողստվության/ ոճի կողմնակից: Ամուսինների միջև կոնֆլիկտը կարող է դրսևորվել վեճերի և փոխադարձ հանդիմանությունների ձևով:

Անձը կարող է կոնֆլիկտ ունենալ նաև սոցիալական խմբի հետ: Հաճախակի են կոնֆլիկտներն անձի և նրա աշխատանքային կոլեկտիվի միջև: Օրինակ՝ որևէ հարցի վերաբերյալ ողջ խումբը կարող է ունենալ մեկ միասնական կարծիք, մինչդեռ նրա

անդամներից մեկը կարող է բոլորովին այլ տեսակետ ունենալ: Նման դեպքերում խումբը սովորաբար ճնշում է գործադրում անձի վրա, որպեսզի նա փոխի իր կարծիքը և ընդունի խմբի տեսակետը: Ծագում է անձ-խումբ տիպի կոնֆլիկտ, որը կարող է լուծվել տարբեր ձևերով: Օրինակ՝ անհատը, չիմանալով խմբի ճնշմանը, կարող է հեռանալ դրանից:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ արտաքին և ներքին կոնֆլիկտները միջև սերտ կապեր կան: Մասնավորապես, արտաքին կոնֆլիկտը կարող է ներքին կոնֆլիկտ ծնել: Օրինակ՝ իրաշխատանքային խմբի հետ կոնֆլիկտի մեջ մտած մարդը կարող է, մենակ մնալով, ներքին կոնֆլիկտ ապրել: Նրա հոգեկանում կարող են բխվել երկու ուժեր կամ միտումներ. ա/ պահպանել սեփական անկախությունը, բ/ հարմարվել խմբին, ընդունել դրա կարծիքը: Նման ներքին կոնֆլիկտները կարող են շատ տանջալից լինել[8]

3.2. Ընտանեկան կոնֆլիկտները, դրանց ազդեցությունը եռանասյի վրա

Ընտանիքը մարդկանց այն խումբն է, որի անդամները միմյանց հետ կապված են արյունակցական կապերով, զգացմունքներով, փոխադարձ օգնության պատասխանատվությամբ և հոգատարությամբ, բարոյական պատասխանատվությամբ և ընդհանուր կենցաղավարությամբ:

Երեխայի բարոյական դաստիարակության հարցում շատ բան պայմանավորված է այն հանգամանքով, թե ծնողներն ինչպիսի վերաբերմունք ունեն միմյանց հանդեպ: Հետևաբար չկան ընտանիքներ, որոնցում չլինեն վեճեր և տարաձայնություններ: Կոնֆլիկտային ընտանիքում մեծացած երեխան, տեսնելով ու զգալով ծնողների թշնամական վերաբերմունքը միմյանց նկատմամբ, ձեռք է բերում հաղորդակցման բացասական փորձ: Նա դադարում է հավատալ, որ կնոջ և տղամարդու միջև կարող է հաստատվել ընկերական ջերմ և սիրալիր փոխհարաբերություններ: Երեխան ժամանակից շուտ հիասթափվում է ընդհանրապես մարդկային փոխհարաբերություններից և ձեռք չի բերում համագործակցության դրական փորձ: Իսկ դա այնքան անհրաժեշտ է ապագա՝ հատկապես ամուսնական կյանքի համար:

Նյարդայնացած ծնողների անկառավարելի գործողությունները հաճախ կարող են առիթ տալ երեխայի ներքին առաջացմանը:

Սուր կոնֆլիկտների ժամանակ պայքարը թեժանում է բոլոր ճակատներով: Այն արտահայտվում է ամուսինների անհարգալից վերաբերմունքով, երեխաներին վեճի մեջ ներքաշելով, մի խոսքով՝ ստեղծվում է հիմնահարցերը հանգիստ լուծելու անկարողության

իրավիճակ: Երեխաները ցավագին տանում ծնողների անհաշտությունները: Կան ծնողներ, որոնք կարծում են, թե երեխան ոչինչ չի նկատում և հանգիստ զբաղված է խաղով կամ դասերով: Սակայն հավատացե՞ք, որ ոչինչ աննկատ չի անցնում երեխայի համար, ոչ թե՛ կռիվները, ոչ էլ փոխադարձ սառնությունը: Երեխան պարզապես պարփակվում է իր մեջ՝ փորձելով դուրս մղել ցավի զգացումը: Սակայն հնարավոր է, որ նա այդ ցավը ապրի իր ողջ կյանքի ընթացքում:

Ընտանեկան կոնֆլիկտներն անխուսափելի են և ուղեկցում են մեզ ամբողջ կյանքի ընթացքում: Դրանք ծագում են տարբեր տեսակետների, դիրքորոշումների ու կարծիքների խաչաձևման, հաճախ էլ բախման հետևանքով: Կյանքում գոյություն ունի բախումնավատանգ իրավիճակից դուրս գալու երկու ձև՝ պոզիտիվ և նեգատիվ /դրական և բացասական/:

Առաջին դեպքում երկու կողմերը բարյացկամ մթնոլորտում քննարկում են իրենց անհանաձայնությունները, աշխատելով հասկանալ դիմացինին և հարգելով նրա կարծիքը: Կոնֆլիկտից դուրս գալու նման տեսակը նպաստում է ամուսինների հարաբերությունների զարգացմանը: Միայն ճիշտ հաղթահարելով կոնֆլիկտները՝ ամուսինները որպես անձնավորություն դառնում են ավելի հասուն:

Դեստրուկտիվ կոնֆլիկտների դեպքում երկու կողմերից ոչ մեկը չի գնում զիջման, և հաճախ հակամարտող ծնողների համար երեխայի դաստիարակությունը վերածվում է «ռազմի դաշտի»: Այստեղ նրանց հնարավորություն է ընձեռվում բացեփբաց արտահայտել կարծիքները միմյանց մասին և առաջնորդվել «երեխայի նկատմամբ հոգառությամբ»: Ընդ որում, տեսակետները հաճախ լինում են իրարամերժ. մեկը պնդում է խիստ դաստիարակության անհրաժեշտությունը, մյուսը հակված է «խղճալ» դեռահասին և դժգոհություն է հայտնում ամուսնու կողմից կիրառված դաստիարակության մեթոդների վերաբերյալ: Ի դեպ, պարզվում է, որ երկու կողմերին էլ հետաքրքրում է ոչ թե դեռահասի դաստիարակությունը, այլ այն, թե ով է իրավացի նմանատիպ վեճերում:

Կոնֆլիկտների նկատմամբ պատասխան հակաազդեցության ուժն ու խորությունը կախված են երեխայի խառնվածքից, դաստիարակությունից, տարիքից և այլն: Նույնիսկ շատ փոքր տարիքի երեխաները զգում են ծնողների միջև ստեղծված կոնֆլիկտային հարաբերությունները: Նախադպրոցական տարիքի երեխաները ևս նրբորեն զգում են ծնողների վեճերը և բավականին իմաստավորված հակաազդեցություն ցույց տալիս:

Երբ ծնողների հարաբերություններում ինչ-որ բան փոխվում է, երեխան ուզում է հասկանալ ստեղծված իրավճակը և փորձում հարմարվել նոր հարաբերություններին:

Երեխան ցանկանում է երկուսի հետ էլ մտերմություն պահպանել և, ինքնաբերաբար, մեկ մոր կողմն է անցնում, մեկ ` հոր: Այդպիսի վարքը կարող է երեխայի մեջ ձևավորել ստախոսություն, կեղծավորություն, շահախնդրություն, անվստահություն, ինքնամփոփություն կամ չափազանց ինքնավստահություն: Կոնֆլիկտային ընտանիքների երեխաները որպես օրինաչափություն անընդհատ տխուր են լինում:

Որպես կանոն այն ընտանիքներում որտեղ անընդմեջ կոնֆլիկտային իրավիճակներ են ստեղծվում, երեխաները լինում են տխուր, չշփվող, ինքնամփոփ, կաշկադված կամ հակառակը` ագրեսիվ, դյուրագրգիռ, նյարդային, անհանգիստ: Դեռահասների դեպքում որոշ մասի մոտ նկատվում է վաղաժամ հոգեբանական հասունացում, իսկ որոշ դեռահասներ կարող են ձեռք բերել վնասակար սովորույթներ և կարող են շեղվել կյանքի ճիշտ ուղուց: Իհարկե այս ամենը ունենում է իր բացասական նշանակությունը նաև երեխաների և դեռահասների ուսման որակի վրա:

Մանկահասակները դժվարությամբ են հաղորդակցվում հասակակիցների հետ: Նրանց մոտ կարող է առաջ գալ հիվանդագին երևույթներ` ներոգ, գլխացավ, գիշերամիզություն: Ծնողները պետք է հաշվի առնեն, որ երեխայի բնավորության ագրեսիվ գծերը, որոնք իրենք այդքան քննադատում են, երեխայի ներքին ինքնապաշտպանական մեխանիզմների աշխատանքի արդյունքն են:

Ծնողական ընտանիքի օրինակի հիման վրա հետագայում երեխան կառուցում է իր սեփական ընտանիքը: Երեխաները, որոնք վերցրել են ծնողներից վարքի բացասական գծեր, ավելի շատ են դժվարությունների հանդիպում կյանքում: Կազմելով սեփական ընտանիք, նրանք ստիպված են լինում վերադաստիարակվել, վերափոխվել և ստեղծել նոր ընտանեկան փոխհարաբերություններ:

Եթե դեռահասության հասակը համընկնում է ընտանեկան հարաբերությունների այդպիսի շրջանի հետ, ապա այն բացասաբար է ազդում երեխայի բնավորության ձևավորման վրա: Իսկ վերջում, երբ ընտանիքը անջատվում է այս շրջանը տառապալից է ծնողների համար: Տեղի է ունենում լավագույն հույսերի խորտակում, ծագում է հիասթափություն, կասկածամտություն: Այս բարդ նյարդային մթնոլորտում վնասվում է երեխայի առողջությունը: Ծնողի կորուստը նույնպես սթրեսավտանգ է երեխայի հոգեկանի ձևավորման և ադապտացման բուռն շրջաններում` ճգնաժամային տարիքներում:

Ընտանիքի դաստիարակչական ուժը, դրա դրական ներգործությունը դեռահասի վրա կարելի է պահպանել, եթե սթրեսային վիճակները, ամեն ինչ կորցնելու վախի զգացումը

չեզոքացվեն սփոփանքի և ապրումակցության միջոցով[7]:

Դեռահասների և մեծահասակների կոնֆլիկտների պատճառները:

Դեռահասության փուլի սկզբում ստեղծվում է հակասություններով լի իրադրություն, հատկապես երբ մեծերը շարունակում են դեռահասի հետ վարվել այնպես, ինչպես երեխայի հետ: Այդպիսի վերաբերմունքը, մի կողմից, հակասության մեջ է մտնում դաստիարակության խնդիրների հետ և խանգարում է դեռահասի սոցիալական հասունության զարգացմանը: Մյուս կողմից, այն անհամատեղելի է դառնում սեփական չափահասության մասին զարգացող անձնավորության պատկերացումների և նոր իրավունքները օգտվելու նրա հավակնությունների հետ: Հենց այս հակասությունն է այն կոնֆլիկտների ու դժվարությունների աղբյուրը, որոնք բնորոշ են մեծերի ու դեռահասների հարաբերությունների համար, երբ նրանք տարբեր պատկերացումներ ունեն դեռահասի իրավունքների և ինքնուրույնության մակարդակի մասին: Դեռահասի կողմից պատասխան վերաբերմունք է առաջ բերում, որը դրսևորվում է անհնազանդության ու բողոքի տեսքով, այդ հակասական միտումների ու փոխադարձ դիմադրության գոյությունը առաջացնում է բախումներ, և եթե չափահասի վերաբերմունքը շարունակում է մնալ նույն կերպ, ապա դրանք կրկնողական բնույթ են ստանում, իսկ դեռահասի բացասականությունը ավելի ու ավելի անկոտրում է դառնում: Այս իրադրության պահպանման դեպքում նախկին փոխհարաբերությունների վերացումը կարող է տևական բնույթ ստանալ, զբաղեցնել դեռահասության ողջ փուլը և շարունակական կոնֆլիկտի ձև ընդունել: Կոնֆլիկտը կարող է շարունակվել այնքան ժամանակ, քանի դեռ չափահասը չի փոխել իր վերաբերմունքը: Կոնֆլիկտային փոխհարաբերությունները նպաստում են վարքի հարմարվողական մեխանիզմների զարգացմանը և դեռահասի ազատագրմանը: Առաջ են գալիս օտարություն, համոզվածություն, որ մեծերը անարդարացի են: Այդ համոզվածությունը հենվում է այն պատկերացման վրա, որ չափահասը իրեն չի հասկանում և չի էլ կարող հասկանալ: Մրա հիման վրա առաջանում է չափահասների պահանջները, գնահատականները, հայացքները չընդունելու գիտակցված միտում, որի հետևանքով ծնողներն ու ուսուցիչները կարող են ընդհանրապես կորցնել դեռահասի անձի բարոյական ու սոցիալական դիրքորոշումների ձևավորման այդ պատասխանատու փուլում նրա վրա ազդեցություն գործելու հնարավորությունը: [10]:

Կոնֆլիկտը հետևանք է այն իրողության, որ մեծերը հաճախ չեն կարողանում կամ չեն ցանկանում իրենց կողքին նոր տեղ գտնել դեռահասի համար: Դեռահասի

ինքնուրույնության ու իրավահավասարության խնդիրը նրա դաստիարակության ամենաբարդ ու սուր կերպով դրվող խնդիրներից մեկն է: Անհրաժեշտ է գտնել ինքնուրույնության այնպիսի աստիճան, որը համապատասխաներ դեռահասի հնարավորություններին, նրան ներկայացվող հասարակական պահանջներին և դաստիարակներին թույլ տալ ուղղություն հաղորդել դեռահասին, ազդեցություն գործել նրա անձի զարգացման ընթացքի վրա:

Միևնույն ժամանակ, դեռահասները բնութագրվում են մոտիկ մեծահասակներից ազատվելու ցանկությամբ: Կապի հիմնական դժվարությունները, կոնֆլիկտները ծագում են ծնողների՝ դեռահասների նկատմամբ վարքի, ուսման, ընկերների ընտրության վերահսկողության շնորհիվ: Դաստիարակության մի քանի ոճեր կան, որոնք որոշում են դեռահասի մեծահասակների հետ հարաբերությունների առանձնահատկությունները և նրա անձնական զարգացումը:

Մեծահասակների կողմից անտարբեր վերաբերմունքի համադրությունը և հսկողության լիակատար բացակայությունը՝ հիպոխնամքը նույնպես անբարենպաստ տարբերակ են մեծահասակների և դեռահասների միջև հարաբերությունների համար: Դեռահասներին թույլատրվում է անել ինչ ուզում են, ոչ ոք չի հետաքրքրում իրենց գործերով: Նման թույլատրելիությունը, հեռացնում է մեծահասակների պատասխանատվությունը երեխաների գործողությունների հետևանքների համար: Սովորաբար դեռահասները, մեծահասակության զգացողությամբ առաջնորդվելով, իրենք նախաձեռնություն են ձեռնարկում փոխելու ծնողների վերաբերմունքը նրանց նկատմամբ: Եթե դա տեղի չի ունենում, ապա մեծահասակի և դեռահասի միջև հարաբերություններում առաջանում է կոնֆլիկտներ: Մեծահասակների դիմադրությունը դեռահասին ստիպում է արձագանքել անհանգստության և բողոքի տարբեր ձևերի տեսքով, եթե այս իրավիճակը շարունակվի, նախորդ հարաբերությունների խզումը կարող է ձգձգնել ամբողջ պատանեկության շրջանում և դառնալ քրոնիկ կոնֆլիկտի ձև և հակամարտությունը կարող է շարունակվել այնքան ժամանակ, մինչև մեծահասակը փոխի իր վերաբերմունքը դեռահասի նկատմամբ: Հակամարտությունը մեծահասակի կողմից նոր տեղ գտնելու անկարողության կամ չցանկանալու արդյունքն է: Անհրաժեշտ է գտնել անկախության այնպիսի աստիճան, որը կհամապատասխանի դեռահասի կարողություններին, նրա համար սոցիալական պահանջներին և հնարավորություն կտա մեծահասակին ուղղորդել իրեն, ազդել նրա վրա:

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Հետազոտական մեթոդի նկարագիրը

Դեռահասների կոնֆլիկտային վարքի առանձնահատկությունները բացահայտելու համար մեր կողմից կատարված հետազոտության մեջ կիրառվել է Ք. Թոմասի «Անձի կոնֆլիկտային վարքի հակվածության ախտորոշման» հարցարանի հարցերից: Ք. Թոմասն անհրաժեշտ է համարում ուշադրություն դարձնել այն բանին, թե կոնֆլիկտային վարքի ինչ ձևեր են բնորոշ մարդկանց, դրանցից որոնք են հանդիսանում արդյունավետ, ինչպես է հնարավոր խթանել արդյունավետ վարքը: Հարցարանում ներկայացված են կոնֆլիկտային վարքը նկարագրող հնարավոր պնդումներ, և պատասխանողին առաջարկվում է ընտրել այն պնդումը, որը հանդիսանում է ամենից տիպիկը իր վարքի

բնորոշման համար: Կոնֆլիկտային իրավիճակում անձանց վարքի տեսակների բնութագիրը, Թոմասը կիրառելի է համարում կոնֆլիկտների կարգավորման այնպիսի մոդելը, որտեղ հիմնային է հանդիսանում համագործակցությունը, որը բնորոշվում է այլ անձանց հետաքրքրությունների վրա անձի ուշադրությամբ և համատրությամբ, որին բնորոշ է սեփական հետաքրքրությունները պաշտպանելու հակումը: Թոմասը առանձնացնում է կոնֆլիկտի կարգավորման հետևյալ միջոցները՝ մրցակցություն, հարմարում, փոխզիջում, խուսափում և համագործակցում:

1. Մրցակցություն: Այն դրսևորվում է, որպես իր հետաքրքրությունները ուրիշների հաշվին քվարարելու ձգտում:

2. Համագործակցություն: Այս դեպքում իրավիճակի մասնակիցները հանգում են մեկ ընդհանուր որոշման, որը բավարարում է կողմերի հետաքրքրությունները:

3. Փոխզիջում: Դրսևորվում է երկու կողմերի պահանջների բավարարման ձևով:

4. Խուսափում: Այս վարքային առանձնահատկությանը բնորոշ է սեփական նպատակներին հասնելու ձգտումների բացակայությունը:

5. Հարմարում: Այս հատկանիշն ի հակադրություն մրցակցության, դրսևորվում է սեփական շահերը ուրիշների համար զոհաբերելու վարքագծով [7]:

Հետազոտության օբյեկտը 14-17 տարեկան դեռահասներն են:

Հարցարանը բաղկացած է 23 պնդումներից, որոնցից յուրաքանչյուրն ունի

համապատասխան պատասխանների երկու տարբերակ /այո/ և /ոչ/ (տեսնել հավելվածում):
Լրացնողը ընտրում և նշում է այն տարբերակը, որում նկարագրված վարքն իրեն է նմանեցնում

4.2 Հետազոտության արդյունքների վերլուծություն և ամփոփում

Հետազոտություն իրականացնելու համար կիրառել են Բ. Թոմասի «Անձի կոնֆլիկտային վարքի հակվածության ախտորոշման» հարցարանը, որը թույլ է տալիս պարզել, թե մեր ժամանակի դեռահասները որքանով են մրցակցային, փոխզիջող, խուսափող, հարմարվող և համագործակցող, քանի որ Թոմասը իր թեստում անդրադառնում է հենց այս հինգ կետերին: Թե ինչպիսի ցուցանիշներ է գրանցվել կներկայացնենք ստորև:

Մրցակցություն՝ 40 տոկոս

Փոխզիջում՝ 27 տոկոս

Հարմարում՝ 16 տոկոս

Խուսափում՝ 11 տոկոս

Համագործակցություն՝ 6 տոկոս

Հետազոտության արդյունքները վկայում են այն մասին, որ տղաների մեծամասնությունը կողմ է մրցակցության և ստացել է բարձր ցուցանիշ՝ Կոնֆլիկտային իրավիճակներում մեր կողմից ուսումնասիրված դեռահասների վարքին բնորոշ են հետևյալ ձևերը (ներկայացնում ենք ըստ հերթականության)

Կարող ենք եզրակացնել հետևյալ ցուցանիշներից, որ դեռահաս տղաների մեծ մասը կողմ է մրցակցության և, որ վերջին տեղն է զբաղեցնում համագործակցությունը:

Այժմ անցում ենք կատարում դեռահաս աղջիկներին և ստորև ներկայացնում նրանց հետազոտության ցուցանիշները.

Խուսափում՝ 34 տոկոս

Հարմարում՝ 31 տոկոս

Փոխզիջում՝ 21 տոկոս

Մրցակցություն՝ 8 տոկոս

Համագործակցություն՝ 6 տոկոս

Ինչպես երևում է սվյալներից աղջիկների մեծամասնությունը կողմ է կոնֆլիկտների լուծման խուսափում տարբերակին, իսկ որ ամենաքիչն են ընդունում, դա համագործակցելն է:

Եզրակացություններ և առաջարկություններ

1. Ընդհանրացնելով կատարված աշխատանքը՝ մենք եկանք այն եզրակացության, որ ընտանիքում տիրող անառողջ մթնոլորտը, կոնֆլիկտային իրավիճակները միանշանակ նեգատիվ ազդեցություն են ունենում երեխաների հեգեբանության վրա: Երեխաները մշտապես գտնվելով ստրեսային իրավիճակներում ձեռք են բերում հաղորդակցման բացասական փորձ, ունենում են ցածր ինքնագնահատական, հասուն տարիքում դառնում են սառնասիրտ, ունենում ապրումակցման ցածր մակարդակ: Այդ երեխաների ծնողները չեն նկատում, որ իրենց երեխան ձեռք է բերում բնավորության բացասական գծեր, կատարում անընդունելի արարքներ, դրսևորում հակասոցիալական վարքագիծ: Ծնողները պետք գտակցեն, որ պատասխանատվություն են կրում իրենց երեխաների դաստիարակության և զարգացման համար: Նրանք պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների առողջության, ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացման մասին՝ ստեղծելով ընտանիքում առողջ մթնոլորտ, նվազագույնի հասցնելով կանֆլիկտային իրավիճակները:

2. Այսպիսով՝ դեռահասությունը սեռական և հոգեբանական հասունության բարդ շրջան է: Անձի զարգացման այս շրջանում էական փոփոխություններ են տեղի ունենում ինքնագիտակցության մեջ, հայտնվում է հասունության զգացողություն, մեծահասակ լինելու զգացում, այն դառնում է երիտասարդ դեռահասների կենտրոնական նորագոյացություն: Ինչպես հաստատվեց մեր հետազոտության վերջում դեռահասները ավելի կողմ են կոնֆլիկտների լուծման մրցակցային տարբերակին, պատրաստակամ չեն զիջել միմյանց, տեսնում ենք նաև անկայուն վարքի դրսևորման ձևեր կոնֆլիկտային իրավիճակներում, որը նույնպես կարող է շփման ընթացքում խնդիրների առաջացման պատճառ դառնալ: Վերոնշյալ դիտարկումը տղա դեռահասների մասին էր, իսկ աղջիկների մեծամասնությունը, որով առաջնորդվում են կոնֆլիկտների ժամանակ դա խուսափելն է և, որ վերջին տեղն է զբաղեցնում համագործակցելը: Սակայն պարզվեց նաև, որ թե աղջիկները, թե տղաները կոնֆլիկտային իրավիճակներում ամենաքիչն են ցանկանում համագործակցել, որն ըստ իս ամենաարդյունավետ տարբերակն է կոնֆլիկտները հաղթահարելու:

Այսպիսով՝ վարկածն ապացուցված է տղաների մասով, որով ժամանակակից դեռահասին բնորոշ է կոնֆլիկտային իրավիճակում մրցակցային ոճը, իսկ աղջիկների մասով ոչ, քանի որ աղջիկների մեծամասնությունը կոնֆլիկտային իրավիճակներում նախընտրում է խուսափումը:

Այս ժամանակահատվածում ամենակարևոր և սթրեսային մասը դեռահասի հարաբերությունն է ծնողների հետ: Այստեղ իրավիճակի ծանրությունը պայմանավորված է մի կողմից տնտեսական կախվածությունից, իսկ մյուս կողմից՝ անկախության ցանկությունից, անկախության աճող անհրաժեշտությունից: Ծնողների, ինչպես նաև հասակակիցների հետ հարաբերություններում դեռահասը հայտնվում է բավականին ծանր շրջափուլում: Մի կողմից նա զբաղվում է սեփական անձի ձևավորմամբ, իսկ մյուս կողմից նոր կարգավիճակի, նոր կապերի հաստատում. դեռահասի և մեծահասակի փոխհարաբերություններում այս հակասությունը բնորոշ է հենց այս տարիքին:

Դեռահասների և ծնողների միջև փոխհարաբերությունների խնդիրը միշտ եղել և մնում է արդիական: Անձի տարիքը նրա հոգեկան կյանքի և բնավորության գծերի հիմնական չափանիշներից մեկն է: Կախված տարիքից՝ մարդն այլ կերպ է ընկալում կյանքի տարբեր իրավիճակները: Եվ հենց դեռահասների մոտ այսպիսի անկանոն վարք կարող է դրսևորվել, ինչն էլ հանգեցնում է անախորժությունների, այնուհետև կոնֆլիկտային իրավիճակների առաջացման: Ցանկալի է փորձել հասկանալ իրար, ծնողը պետք է գտնվի ավելի խոհեմ, հասկանա իր երեխայի հույզերը, զգացողությունները և ապրումները, իսկ դեռահասն էլ իր հերթին տեղիք չտա իր հույզերին և կոնֆլիկտներ չառաջացնի: Եթե փոխհարաբերությունները իրականանան խաղաղ ու հանգիստ պայմաններում, ապա կունենանք առողջ շփում, որը լավ կլինի թե ծնողի, թե դեռահասի, թե այն մեծահասակների համար, ովքեր ցանկանում են նորմալ շփում ունենալ դեռահասի հետ:

Օգտագործված գրականություն

1. Ն. Գ. Ազատյան, Ավետիսյան Ք. Ս., Բժշկական հոգեբանություն, խմբագիր Խ. Վ. Գասպարյան /756 էջ/
2. Ռ. Վ. Աղուզումցյան, Լոքոյան Ա. Բ., Պետրոսյան Լ. Հ., Կոնֆլիկտի կառավարումը կազմակերպություններում, «Պետական ծառայություն», 2012թ. /147 էջ/
3. Բոլդիրև, Դաստեկ, 1974թ. /154 էջ/
4. «Ընտանիք և դպրոց», Գիտամեթոդական ամսագիր, Երևան 2010 /88 էջ/5. «Ընտանիք և դպրոց», Գիտամեթոդական ամսագիր, Երևան 2008 /90 էջ/
6. «Ընտանիք ու դպրոց», Գիտամեթոդական ամսագիր, 2010թ. /88 էջ/
7. Ս. Խուրոյան, Անձի զարգացման ճգնաժամային տարիքները, Երեվան 2004 /247 էջ/
8. Ա. Նալչաջյան, Հոգեբանության հիմունքներ, Բուկինիստ 2016թ. /438 էջ/
9. Վ. Պ. Պետրունեկ, Լ. Ն. Տարան, Հուզումնալից հասակ, Երևան 1975թ. /256 էջ/
10. Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Ա. Վ. Պետրովսկու խմբագրությամբ, 1977 թ. /397 էջ/
11. Е.Д. Божович, Психологические особенности развития личности подростка, 1979г. /247/
12. Л.С.Выготский, Собрание сочинений т.М, “Педагогика”, 1995г. /391/ 13. Л. И. Божович, Этапы формирования личности, 1995г. /229/
14. И.С. Кон, Психология ранней юности, М. «Просвещение», 1989г. /234/
15. Ф. Тайсон, Тайсон Р., «Психоаналитические геории развития», 1998г. /225/
16. Х. Ремшмидт, Подростковый и юношеский возраст, М. Мир, 1994г. /256/
17. Э. Эриксон, Дейтство и общество, 1996г. /592/

Հավելված՝ Հետազոտության պնդումներ / այո կամ ոչ /

- Ես կիրառում եմ տարբեր հնարքներ իմ ուզածին հասնելու համար:
- Երբեմն ես հնարավորություն եմ տալիս մյուսին իր վրա վերցնել վիճելի հարցի որոշման պատասխանատվությունը.
- Ես փորձում եմ գտնել կոմպրոմիսային լուծում .
- Սովորաբար ես ձգտում եմ հասնել իմ ուզածին .
- Ես փորձում եմ հանգստացնել մյուսին և պահպանել մեր հարաբերությունները.
- Ես փորձում եմ անել ամեն ինչ որպեսզի չհայտնվեմ լարված իրավիճակում .
- Ես փորձում եմ հետաձգել վիճելի հարցի լուծումը, որպեսզի ժամանակի ընթացքում հասնեմ իմ ուզածին .
- Ես սովորաբար համառորեն քայլեր եմ ձեռնարկում իմ ուզածին հասնելու համար.
- Ես շատ հաճախ զիջում եմ իմ դիրքերը.
- Ես կարծում եմ, որ միշտ չէ որ պետք է անհանգստանալ ծագող տարակարծությունից .
- Ես փորձում եմ ճնշել մյուսի զգացմունքները.
- Ես առաջարկում եմ գալ փոխհամաձայնության .
- Ես փորձում եմ պարտադրել ցույց տալով իմ հայացքների առավելությունները .
- Ամեն ինչ անում եմ ավելորդ լարվածությունից խուսափելու համար.
- Ես փորձում եմ հետզհետե տարբեր միջոցներով հասնել համաձայնության
- Ես փորձում եմ գտնել բոլորի համարն ընդունելի տարբերակ .
- Ես հետ եմ մղում իմ ցանկությունները.
- Ես առաջարկում եմ միջին տարբերակ.
- Ես շրջանցում եմ խնդրահարույց իրավիճակները.

- Ես փորձում եմ չանտեսել մյուսի կարծիքը, զգացմունքները.

- Ես միշտ գրավում եմ այնպիսի դիրք,որ մյուս հետաքրքրված անձի հետ հասնեմ հաջողության .

- Եթե դա կերջանկացնի մյուսին ես միշտ հնարվորություն կտամ նրան մնալ իր կարծիքին

- Ես հաճախ հարմարվում եմ մյուսի կարծիքի հետ .